Պատվաստանյութեր

թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց համար

Եթե Դուք ունեք իմունային անբավարարություն, հնարավոր է, որ Ձեզ համար ավելի դժվար լինի պաշտպանվել կանխարգելվող հիվանդություններից: Պատվաստանյութերի միջոցով կանխարգելվող որոշ հիվանդություններ կարող են Ձեզ դնել թոքերի լուրջ վարակներ ունենալու ավելի մեծ վտանգի տակ, որը կարող է պահանջել հիվանդանոցային բուժում կամ նույնիսկ մահ առաջացնել:

Պատվաստումներն անվտանգ, արդյունավետ և հեշտ միջոց են կանխարգելվող հիվանդություններից Ձեզ պաշտպանելու համար և հատկապես կարևոր են թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց համար, քանի որ Դուք ավելի մեծ դժվարությամբ եք բուժվում վարակներից կամ հիվանդություններից: Այնուամենայնիվ, կախված այն հանգամանքից, թե որքան է վնասված Ձեր իմունային համակարգը՝ հնարավոր է, որ Դուք կարիք ունենաք խուսափելու որոշ պատվաստանյութերից կամ սպասեք, մինչև Ձեր իմունային համակարգն ուժեղանա:

Հարցրեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին, թե որ պատվաստանյութերն են Ձեզ խորհուրդ տրվում:

Ո՞ր պատվաստանյութերն են ինձ անհրաժեշտ

- **COVID-19-ի դեմ պատվաստանյութ:** 6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց խորհուրդ է տրվում ստանալ COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութի առնվազն1 դեղաչափ: Թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց խորհուրդ է տրվում 6 ամիս (առնվազն 2 ամիս) տարբերությամբ ստանալ 2024-2025 թվականների COVID-19 դեմ պատվաստանյութի առնվազն երկու դեղաչափ, որը համապատասխանում է իրենց տարիքին: Կարող են ստանալ լրացուցիչ դեղաչափեր՝ հիմնվելով իրենց բժշկական ծառայությունների մատակարարի հետ քննարկման վրա, կամ եթե նախկինում չեն պատվաստվել:

  Նախկինում **չպատվաստված** անձինք պետք է ստանան թարմացված ԻՌՆԹ (mRNA) պատվաստանյութի (Pfizer BioNTech կամ Moderna) 3 դեղաչափ կամ Novavax-ի նորացված COVID-19-ի դեմ պատվաստանյութի 2 դեղաչափ:

  Այն մարդկանց, ովքեր նախկինում ստացել են բնօրինակ Novavax, միավալենտ կամ երկվալենտ ԻՌՆԹ պատվաստանյութ, անհրաժեշտ է COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութի 1 կամ 2 դեղաչափ՝ կախված նախորդ դեղաչափերի քանակից:

- **Գրիպի դեմ պատվաստանյութ:** Սա պետք է ստանաք ամեն տարի, հատկապես աշնանը, որպեսզի նվազեցնեք գրիպով հիվանդանալու հավանականությունը: Եթե Դուք 65 տարեկան կամ ավելի բարձ տարիքի եք կամ 18-64 տարեկան եք և ունեք փոխպատվաստված օրգան և ընդունում եք իմունային համակարգը ճնշող դեղեր, հարցրեք Ձեր մատակարարին ավելի մեծ չափաբաժնով գրիպի պատվաստանյութի մասին՝ ռեկոմբինանտ կամ իմունախթանիչ (ադյուվանտ):

County of Los Angeles Public Health

Պատվաստանյութեր

թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց համար

- **Շնչառական սինցիտիալ վիրուսի (RSV) դեմ պատվաստանյութ:** 75 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց մեկ դեղաչափը պաշտպանում է շնչառական սինցիտիալ վիրուսից (RSV): Մեկ դեղաչափ է խորհուրդ տրվում 60-74 տարեկան այն մարդկանց, ում համար RSV-ով ծանր հիվանդանալու վտանգը մեծ է, օրինակ՝ իմունային անբավարարություն ունեցող մարդկանց:

  8 ամսականից փոքր երեխաները պետք է ստանան nirsevimab-ի (Beyfortus) մեկ դեղաչափ RSV-ի սեզոնին (հոկտեմբերից մարտ) կամ դրանից առաջ, որպեսզի պաշտպանվեն ծանր շնչառական սինցիտիալ վիրուսի հիվանդությունից: Nirsevimab-ի մեկ դեղաչափ պետք է ստանան նաև 8-19 ամսական այն երեխաները, ում համար շնչառական սինցիտիալ վիրուսով ծանր հիվանդանալու վտանգն ավելի մեծ է և ովքեր մտնում են RSV-ի իրենց երկրորդ սեզոնը:

- **Թոքաբորբի դեմ պատվաստանյութ**: Այս պատվաստանյութը պաշտպանում է պնևմակոկային բակտերիաների մի քանի տեսակներից, որոնք կարող են առաջացնել լուրջ վարակներ երեխաների և չափահասների մոտ: Մանկական 4 դեղաչափով շարքը խորհուրդ է տրվում մինչև 5 տարեկանը: Ավելի մեծ երեխաների և չափահասների համար խորհուրդները կարող եք գտնել այստեղ:

Ինչպե՞ս ես պատվաստվեմ

- Այցելեք Ձեր բժշկական մատակարարին կամ դեղատուն:
- Հարցրեք Ձեր մատակարարին՝ արդյո՞ք Ձեզ խորհուրդ են տրվում հավելյալ դեղաչափեր:
- Եթե չունեք մատակարար, այցելեք publichealth.lacounty.gov/vaccines՝ անվճար կամ ցածր արժեքներով պատվաստման կլինիկաների ցանկի և պատվաստանյութերի մասին հավելյալ տեղեկությունների համար:
- Լավն այն է, որ Դուք կարող եք պատվաստումների մեծ մասն անել միևնույն այցի ընթացքում:

Խորհուրդ տրվող պատվաստանյութերի ցանկի համար այցելեք www.cdc.gov/vaccines

Հանրային Առողջության զանգերի կենտրոն

Հավելյալ տեղեկությունների համար Հանրային Առողջության զանգերի կենտրոնը հասանելի է **1-833-540-0473** հեռախոսահամարով ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8-ը՝ շաբաթը յոթ օր: